35. ԲԵԲԱԽՏ ԸՆԿԵՐՏԱՆՔ

Կէղնի չէղնի մե հերմ ու մերմ ու թաք տղեմ։

Կէղնի օր հերը կը հիվընդնա։ Կը կանչե կը տղին։ Տղեն գուքա հորը քով։

Հերը կըսե թե.— Օղուլ, կէղնի օր ես կը մեռնիմ, մալիդ տանդ մուղաթ կեցի, դու մե թաքմ տղա ես։

Կէղնի օր հերը կը մեռնի։ Հերն օր կը մեռնի էդ տղեն քառսուն հատ կարգաշլրդ իշաթ կէնե։ Էդ քառսուն կարդաշլրդին էլ քառսուն օր կը բերե, կը կերու, կը խմցու. իրեն մալն ու բան էլ կէղնի օր կը պարպի կը։

Մերը կըսե թե.— Օղուլ դու ընչի՞ էդման էրիր, քառսուն հոգին բերիր, քառսուն օր ամեն իտարեդ կերուցիր։ Դուն էլ գնա օրը մեկի տունը ապրե, հարի քառսուն օրը թմմի։

Մանչը դելնի կէրթա սապախտան մե ընկերոչը տունը։ Ընկերն էդոր էրեսը հեչ չի աշե։

Կըսե.— Տղեք, էդ վե՞վ է, վռնտեք, բան ման կը գողնա։

Հասկցեր է, օր էդոր տուն էլ ուտելու խմելու բան չկա։

Էդ մանչը քառսուն ընկերոչն է կը պտտվի կը, քառսունն էլ էդոր կը վռնդեն։ Կը դառնա կը, գուքա իրեն տուն, գուքա կը նստի գուլա։

Մերը կ'ըսե.— Օղուլ, ընչի՞ գուլաս։

Կ'ըսե.— Ի՞նչ ընեմ մայրիկս, գնացի քառսուն ընկերտանցս տունն էլ պտտվա, քառսունն էլ ընձի վռնդին,— կըսե,— ելնիմ էրթամ կուրբաթ, էրթամ դատիմ, բալքի քիչմ իդարա էնենք։

Տղեն գելնի սաբախտան կէրթա կը։ Կէրթա մե քաղաքըմ, կաշե օր քաղքի շենլիքը բյուլուգ-բյուլուգ կէրթան կը։

Մե կնկանըմ կը հարցու, կ'ըսե.—Մայրի՛կ, էս ձեր շենլիքը ո՞ւր կէրթա։

Կ'ըսե.— Մե ռունտ աղչիկըմ կա, էսօր հ'ելեր է բախչեն, շենլիքը կէրթա հեռու կայնի, սեյր կ'էնե։

Մանչը կ'ըսե.— Ես է էրթամ ի՞նչ կէղնի։

Կ'ըսե.— Դու գիտես, կէրթաս գնա։

Մանչը գելնի կէրթա կը, խառնվի կը շենլիքին։ Շենլիքի հետ սեյր կէնե։

Իրկուն կէղնի շենլիքը քաշվին կը, մանչը շոկվի մտնի կը բախչեն։

Կէրթա շվերը կը վերու մտի կը տակը։ Մտնի հոտ կը նստի։

Էգա աղչիկը գուքա ախպուրը, շուր կը խմե, կ'աշե շվերու տակը մե տղեմ կա։

Կ'ըսե.— Տղա, դու վե՞վ ես։

Տըղեն կ'ըսե.— Ես ղարիբ եմ էկե։

Կ'ըսե.— Ինչի՞ ես էկե։

Կ'ըսե.— Ես քեղի համար եմ էկե։ Էկեր եմ օր քեղի տանիմ։

Կ'ըսե.— Ընձի կարա՞ս խլըսեսնե։

Կ'ըսե.— Դու օր գաս, իշալահ կը խլըսեսնեմ կը։

Էդ աղչկան կառնի կ'էրթա։ Կէրթա մե սարիմ կուշտը։

Աղչիկը կըսե.— Հա՜յ վախ, հա՜յ վախ, էս սար մե դեվըմ կա, գուքա ընձի քու ափեդ կառնի։

Քիչ տեղմ կէրթան։ Դևը գելնի, գելնի ու շիտկի դեպի էդոնց գուքա։ Գուքա, ձիու գյամը կը բռնե, կ'ըսե.— Աֆարեմ ղոչաղ տղա, էս աղչիկն ընձի, դյունեի[1] մալը քեղի։

Աղչիկը կառնի տղի ափեն կը տանի կը։ Կը տանի նե կէնե մե մաղարեմ, ինք կ'էրթա սարերը պտտվելու։

Դևն օր կէրթա, մանչը գուքա, կըսե.

— Աղչի, էդ դևուն ըսա. «Քու հոգիդ ո՞ւրտեղ է, հոգուդ տեղն ըսա, հոգուդ հետ խաղամ, հարի դու սարերեն տուն գաս, ես մենակ եմ, մենակ ինչի՞ պիտի կենամ էս մաղարեն»։

Հ'իրիկունը դևը գուքա, գուքա օր աղչիկը գուլա։

Դևը կըսե.— Աղչի, ինչի՞ գուլաս։

Կ'ըսե.— Մենակ էրիր ընձի մաղարեն, դու գնացիր սարերը, մե-

[1] Աշխարհի (Ս. Բ.)։

նակ ես ի՞նչրխ կենամ, հոգուդ տեղը ըսա, հոգուդ հետ խաղամ, հարի դու սարերեն գաս։

Կ'ըսե.— Իմ հոգիս ցախավելն է։

Դևը կէրթա, մանչը գուքա էլի։— Կ'ըսե.— Աղջի, դևը ըսա՞վ հոգու տեղը։

Կ'ըսե թե.— Դևն ըսավ իմ հոգիս ցախավելն է։

Կ'ըսե.—Դևը քեզի խափեր է, չոր ցախավելն էլ հոգի կէղնի՞։

Դևը մեմե գուքա, աղջիկը կըսե.— Ընչի՞ ընձի խափեցիր, չոր ցախավելն է հոգի կէղնի՞ հեչ։ Հոգիդ, հոգիդ ո՞ւրտեղ է։

Կ'ըսե.— Դու իմ հոգիս կարա՞ս գըտնի, իմ հոգիս ֆիլան սարը մե գեհիկըմ[1] կա, էնոր ճակատը մե ղութիկըմ կա, ղութկի մեջը իրեք ճնճուղ կա, էնոնք են իմ հոգիս, գնա՛, գտի բե, հետը խաղցի։

Դևը կէրթա, մանչը գուքա կը հարցու, կըսե.— Էդոր հոգին գտա՞ր։

Կ'ըսե.— Էդոր հոգին ֆիլան սարը մե գեհիկըմ կա, էնոր ճակաին մե ղութիկըմ կա, էն ղութիկի մեջն է իրեք ճընճուղ կա, էնոնք են էգ դևու հոգին, կարաս օր էրթաս գտնիս։

Մանչը գելնի սարախտան կէրթա կը։ Կէրթա մե պառվիմ միսաֆիր կէղնի։

Կ'ըսե թե.— Մայրիկ, քեզի բանըմ պիտի հարցնեմ, էստեղ մե սարըմ կա, սարը մե գեհիկըմ կա, պիտի էրթամ էնիկ գտնեմ, ընձի էնոր տեղը կարա՞ս խրատ տա։

Կ'ըսե.— Դու էն գեհիկը ի՞նչ պիտի էնես, էնոր քով իսան չի կրնա մոտենա, էնիկ իսնի հոտ որ առնի, սարերը քուլլի կը փակե, քեզ է կը սպանե, մի էրթա, կըսկիծ ես, ջահել ես, արի էղի ընձի տղա, ես քեզի մե ռունտ ախչիկմ ունիմ, կուտամ, մի՛ էրթա, կէրթաս էլ ետ չես դառնա։

Կ'ըսե.— Մայրիկ, ես նշանլու ունեմ, ես կը մեռնիմ, յա էն գեհկին կը զարկեմ։

Կնիկը կ'ըսե.—Էն օր կէրթաս, էն գեհիկը մեր մերու մեջն է, քեզ մե տեղըմ գետինը կը փորես, կը մտնիս կը մեջը։ Ցորեկ օր կէղնի գեհիկ գուքա կը պառկի, դու էն հորի մեջեն կաթասիսը նշան կը բռնես, եղա ճակատին կը զարկես կը, քիչըմ կը կենաս, եզը թասլում կէղնի, հետև կէրթաս եզան մոտիկ, ղութիկը կը հանես։

Մանչը գելնի սարախտան կէրթա։ Կէրթա, մե պառավըմ ռաստ գուքա, կըսե.— Մե կաշիմ կառնիս, էն դևու քուրը էստեղ է, էդ կաշին կը ձքես դևու հառեշը կանցնիս, օր էն դևը քեզի բան չ'ըսե։

[1] Վայրի եզ (Ս. Բ.)։

Կ'էրթա մե կաշիմ կառնի։ Կառնի գըյնի ճամփա, կէրթա, էդ գևու քուրը դուքա հ'առեշ։ Կաշին կը ձքե էդ դևու հ'առեշը։

Դևը կ'ըսե.— Էդիկ քեզի խրատ տվողի ճիտը պրծի, էդիկ քեզի վե՞վ է խրատ տվե։

Կանցնի կէրթա տղեն։ Կէրթա դեհկին կը մոտիկնա, դետնին մե հորըմ կը փորե, կը մտնի կը էդ հորին մեշը, վրեն քուլլի կը ծածկե կը։

Եզն էդոր հոտը կառնի, բոռալեն, փեկոլ էնելեն[1] դեմ էդ տղին դուքա։ Գուքա էդոր բոլորը կը պտտվի, էդոր չի կրնա գտնի, կը դառնա ետ կէրթա էլի մերու մեշը։ Ցորեկվան շոգը կը զոռե, եզը կը պառկի։ Եզը կը պառկի, տղեն հորի մեշեն գլոխը կը հանե դուս, կը հանե, կաշե օր եզը պառկեր է, թվանքը կը լցե, եզու ճակտին նշան կը բռնե։ Ինչրխ օր նշան կը բռնե, եղա ճակտեն հետ կը զարկե։ Եզն էդտեղ կը բոռբռա, տղեն սեյր կէնե։ Եզը կը թապլտվի, կընկնի վեր, կընկնի վեր քիչմ կը մնա, հ'ետև տղեն գելնի կէրթա։ Կէրթա կը մոտիկնա եզան, ճակատի կաշին կը պատռե, ղութիկը կը հանե։ Կը հանե, կը բանա։ Կաշե մեշը իրեք ճնճուղ կա։ Մեկը կը մորթե, էրկուսն էլ ղութիկով կը ղնե ծոցը, կը դառնա գուքա։

Գուքա ճամբի վրեն, կաշին առնող դևը ռաստ գուքա։ Կաշին առնող դևը հիվընդցեր էր։

Կ'ըսե.— Ա՜խ, տղա, մենք իրեք քուր ենք, էն իրեք ճնճուղը մեր իրեքի հոգին է, էդ իրեք ճնճուղ օր սպանիր՝ մենք իրեք քուրս է կը մեռնինք։ Էն օր մեկը սըպաներ ես, երկուսը մի սըպանե, մնկը տուր ընձի, գյունեի մալը քեզի։

Տղեն կ'ըսե.— Ոչինչ բան է, մեկ տամ քեզի օր ուտես, ելնիս ընձի սըպանե՞ս, ես էդքան բան չիտե՞մ։

Մե ճնճուղ կը հանե էդ դևու քովը կը մորթե, օր կը մորթե, էդ դևը կը սատկի։

Կանցնի գուքա, գուքա էն կընկա մոտ օր միսաֆիր է էղե։

Կնիկ կ'ըսե.— Բերի՞ր ղութիկը։

Կ'ըսե.— Բերի։

Կ'ըսե.—իմ ագաթլամես ես. ես խրատ չտայի եզը քեզի կը սպաներ, գնա քանի աշխարքը շեն է, էլ քեզի յոլում չկա։

Տղեն կ'անցնի գուքա։ Գուքա իրեն դևու քով։ Գուքա օր իրեն դևն էլ հիվընդցեր է։

Կ'ըսե.— Տղա՛, դու գիտես, երկու քուրս մեռան, մե էդ ճնճուղը տուր ես կուլ տամ, նշանլուդ կուտամ քեզի, ա՛ռ, գնա։

[1] Հոդը ճանկելով (Ս. Բ.)։

Կ'ըսե.— Ջեմ հավատա, ճնճուղ տամ կուլ տաս թաժանաս, սաղնաս, ելնիս ընձի կտրտե՞ս, նշանլուա չտա՞ս։

Կ'հանե, էգ ճնճուղն է հոդ կմորթե, դևն է կսատկի, կմնան ինքն ու ախչիկը։

Ախչիկ կ'ըսե.— Արի, դևու տունը նստինք, մալ ունի, դելեթ ունի, ուտենք խմենք հոս ապրինք։

Մանչ կ'ըսե.— Ես մե ըխթիար մերըմ ունիմ, տուն ունիմ, առնինք դևու մալը էրթանք մեր տուն։

Գելնին դևու մալը կը բառնան, տունը փըռթին, աշեյեն դուքան։

Գուքան իրեն գեղին կ'մոտենա, միժտա գուքա մորը։

Կ'ըսեն.— Քու տղեղ էկեր է, լավ-լավ ախչիկմ բերեր է, շատ ռունտ, հետը մալ բերեր է, խազնա բերեր է, աշեյա բերեր է։

Մերը կը խնդա ու կ'ուրախնա, էդտեղ կըսե.— Ելնիմ էրթամ տղիս ու հարսիս դեմը։

Մերը կ'ելնի գուքա։ Գուքա տղին ու հարսին կ'գտնե։ Հարսի երեսները կ'պաքնե, տղի երեսը կ'պաքնե, էն էլ ձեռքը կ'պաքե, հարսն էլ ձեռքը կ'պաքե։

Կ'ըսե.— Օղուլ, ես լալով քոռացա, ըսի ես մե թաք տղեմ ունեի, գնաց կորավ, ես կմեռնիմ տղիս կարոտով։ Է՞ շուքրուր գու դարձար ու էկար։ Մեմ էլ ես քեղի տեսա, մեռնիմ իսե իմ աստծուն։

Կ'առնի տղեն ու հարսը գուքա, գուքա, իրեն տուն գրկըցները գուքան աչքը լուա, կ'ըսեն.— Աչքդ լուս քո կոր·սծ տղեդ գտեր ես։

Օխտ զոր, օխտ գիշեր, օխտ ղաթ դավուլ զուռնով հարսնիքը կէնե։

Էնոնք կերան, խմին իրենց մուրազին հասան, դուք էլ կերեք, խմեք ձեր մուրազին հասեք։

Երկնուց իրեք խնձոր իշավ, մեկը գիր գրողին, մեկ հեքիաթ ըսողին, մեկն է շամաաթին։